

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ստեփանի Զաքարյանի «Օովային էլք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացումը միջազգային հարաբերություններում (ՀՀ օրինակով) («The Realization of Transit Rights of Landlocked Countries in International Relations (On the Example of the RA»)) թեմայով՝ ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Օովային էլքի հիմնահարցը և դրա հետ սերտորեն կապված տարանցման խնդիրները ցանկացած պետության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից են: Օովային էլքի բացակայությունն արտաքին առևտրի համար անբարենպաստ միջավայր ստեղծող և տնտեսական զարգացմանը խոչընդոտող տհաճ գործոն է: Միջազգային հարաբերությունների տեսանկյունից հատկապես կարևոր է պետության քաղաքական խոցելիության ուսումնասիրությունը, որը հատուկ է ծովային էլք չունեցող երկրներին իրենց առափնյա հարևանների հետ հարաբերություններում: Օովային էլք չունեցող երկրները, բացառությամբ եվրոպական որոշ զարգացած երկրների, դեպի ծով ազատ ու անխափան տարանցման հարցում շարունակում են բախվել առափնյա երկրների հարուցած խոչընդոտներին, որոնք էականորեն ազդում են տարանցվող ապրանքների գնային մրցունակության վրա:

Չնայած միջազգային իրավունքը ծովային էլք չունեցող երկրների համար տարանցիկ իրավունքներ է նախատեսում, սակայն առափնյա երկրների ինքնիշխանությամբ հավասարակշռվող այդ իրավունքները կյանքի են կոչվում քաղաքական համաձայնությունների միջոցով: Ներկայիս միջազգային իրավական կարգավորումների խարխլվածության պատճառով առաջացող մարտահրավերների պայմաններում էլ ավելի է կարևորվում ծովային էլք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական հիմքերի ուսումնասիրությունը:

Չնայած դեպի ծով ազատ տարանցման իրավունքը դեռևս 20-րդ դարում ամրագրվել է միջազգային իրավունքի նորմերով, մինչ այժմ խնդրահարույց և արդիական է մնում գործնականում այդ նորմերի կիրառման հարցը: Աշխարհագրական դիրքը, տարածաշրջանային խնդիրները, ինչպես նաև հարևանների հետ հարաբերություններն

Էական ազդեցություն են ունենում ծովային ելք չունեցող առանձին երկրների տարանցման պայմանների վրա: Առանձնահատուկ կարևորություն ունի ծովային ելք չունեցող այն երկրների տարանցման խնդիրների ուսումնասիրությունը, որոնց հարևաններն ամբողջովին մերժում են դեպի ծով ազատ ելքի տրամադրումը: Այդ երկրների շարքին է դասվում նաև Հայաստանը: 1993թ. հայ-թուրքական սահմանի միակողմանի փակման հետևանքով առաջացած կախվածությունը՝ հիմնականում վրացական, մասամբ՝ իրանական նավահանգիստներից, խոչընդոտներ է հարուցում նաև այդ ուղղություններով իրականացվող տարանցիկ ապրանքաշրջանառության հարցում՝ ընդգծելով Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող նման գործոնների վերլուծության արդիականությունը:

Հայաստանի անվտանգային, տնտեսական շահերի տեսանկյունից թեմայի ուսումնասիրությունն առանձնահատուկ արդիականություն է ստանում 2020թ. 44-օրյա պատերազմի արդյունքում Հարավային Կովկասում ձևավորված տարածաշրջանային նոր իրողությունների, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացներում տնտեսական ու տրանսպորտային կապերի ապաշրջափակման խնդրի կարևոր նշանակության համատեքստում: Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացումը՝ որպես երկկողմ հարաբերությունների ամբողջական կարգավորման բաղադրիչ, 44-օրյա պատերազմից հետո Թուրքիայի հետ ընթացող բանակցություններում Հայաստանի հետապնդած հիմնական նպատակներից է: Այդ գործընթացում Հայաստանի շահերը, բացվող հնարավորություններն ու առկա մարտահրավերները գնահատելու տեսանկյունից Տիգրան Զաքարյանը կարևոր է համարել Հայաստանի՝ որպես ծովային ելք չունեցող երկրի տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող գործոնների համալիր ուսումնասիրությունը:

Հեղինակն ատենախոսության ուսումնասիրության օրյեկտը իրավացիորեն համարում է ծովային ելք չունեցող երկրների և նրանց հարևան առափնյա երկրների միջև հարաբերությունները, իսկ առարկան՝ տարանցման հարցը Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ Հայաստանի հարաբերություններում:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակի նպատակը ծովային ելք չունեցող երկրների ընդհանուր փորձի համատեքստում Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող իրավական և քաղաքական գործոնների բացահայտումն ու դրանց վերլուծությունն է:

Համաձայն հեղինակի կողմից առաջ քաշված նպատակների և խնդիրների՝ մշակվել է աշխատանքի տրամաբանական կառուցվածքը, որը ներառում է ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման իրավաքաղաքական հիմքերը, Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ հարաբերություններում Հայաստանի ազատ ծովային ելքի խնդիրը, ինչպես նաև դեպի ծով ազատ ելքի խնդիրը Հայաստանի բազմակողմ արտաքին քաղաքականությունում:

Ատենախոսությունը 159 էջ է և բաղկացած է ներածությունից, 3 գլխից և 7 ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Սույն ուսումնասիրությունն իրականացնելիս հեղինակն առաջնորդվել է միջազգային հարաբերությունների բնույթի վերաբերյալ քաղաքական ռեալիզմի ընդհանուր մոտեցումներով՝ համադրելով թե՛ դասական, թե՛ կառուցվածքային ռեալիզմի հարացույցերը: Ծովային ելք չունեցող և տարանցիկ երկրների միջև հարաբերությունների օրինաչափությունների, տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող քաղաքական խոչընդոտների ուսումնասիրությունն իրականացվել է ուժերի հարաբերակցության, պետությունների արտաքին քաղաքական որոշումների վրա ազդող կառուցվածքային սահմանափակումների վերաբերյալ քաղաքական ռեալիզմի ընդհանուր տեսական շրջանակի հիման վրա:

Ատենախոսության մեթոդական ապարատը լրացվել է վերացարկման, վերլուծության, համադրության, ինդուկցիայի, դեդուկցիայի, համեմատության ընդհանուր գիտական մեթոդներով:

Առափնյա հարևանների հետ Հայաստանի հարաբերություններում դեպի ծով ազատ ելքի խնդիրն ուսումնասիրելիս կիրառվել է նաև պատմական մոտեցումը՝ պատմության դասերն ու դիվանագիտության ինստիտուցիոնալ հիշողությունը վեր հանելու և երկկողմ բանակցությունների համատեքստում արդի իրավիճակների հետ համադրելու նպատակով: Աշխատանքում օգտագործվել են մեծաքանակ աղբյուրներ և գրականություն, այդ թվում արխիվային նյութեր, փաստաթղթեր, պաշտոնական հաղորդագրություններ, հարցազրույցներ, մամուլի հրապարակումներ և այլն:

Որպես գիտական նորույթ համապարփակ կերպով ներկայացվել է Հայաստանի՝ ծովային ելք չունեցող երկրի կարգավիճակից բխող տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող իրավական և քաղաքական գործոնները: Թեման ուսումնասիրելիս հեղինակը շրջանառության մեջ՝ դրել նոր արխիվային նյութեր, որոնց ուսումնասիրությունը կարող է

օգտակար լինել ծովային էլքի բացակայության հիմնախնդիրը հասցեագրելու բազմաշերտ ռազմավարության մշակման համար:

Մինչև այժմ ծովային էլք չունեցող երկրների հիմնախնդիրներն ավելի շատ ուսումնասիրվել են միջազգային իրավունքի և տնտեսագիտության տեսական դիրքերից: Այս առումով տարանցման հարցերի համակողմանի լուսաբանման գործում որոշակիորեն բաց է մնում հիմնախնդրի ուսումնասիրումը քաղաքական լույսի ներքո: Սույն ատենախոսությունը փորձ է անում լրացնելու նաև այդ բացը:

Ատենախոսությունն ուսումնասիրելիս մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ դիտարկումները.

- Վրաստանով տարանցման խնդիրները վերլուծելիս անդրադարձ չկա 90-ական թվականներին: Մինչդեռ, մասնավորապես, Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակահատվածում շատ ցցուն և մտահոգիչ էին տարանցման խնդիրները, այդ թվում՝ երկաթուղային և խողովակաշարային փոխադրումների ոլորտում:

Արխագական երկաթուղու չգործելու հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանի համար առաջնահերթ կարևորություն էր ձեռք բերել վրացական տարանցմամբ անխոչընդոտ ապրանքաշրջանառության ապահովումը Ռուսաստանի Դաշնության հետ, ինչին խանգարում էին ՌԴ-Վրաստան լարված հարաբերությունները: Նման իրավիճակում մեծ ձեռքբերում էր Վերին Լարսի անցակետի բացումը, որին սակայն անդրադարձ չի կատարվել:

- Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի փոխհարաբերությունները, այդ թվում տարանցման խնդիրները քննարկելիս, հեղինակն իրավամբ անդրադարձել է ՀՀ-Իսրայել հարաբերություններին, մասնավորապես, Իսրայելում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու փաստին, վեր է հանել և վերլուծել դրա օրհավերքը, սակայն, ինչպես որոշ այլ դեպքերում, գնահատական չի տվել այդ իրողությանը, թե ի վերջո ճիշտ էր խորացնել հարաբերությունները Իսրայելի հետ, թե՞ ոչ՝ ելնելով ԻԻՀ-ի խիստ բացասական արձագանքից և Իսրայել-Ադրբեջան խորը ռազմատեխնիկական համագործակցության փաստից:
- Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին և դրանով նոր տարանցման հնարավորությունների ստեղծման մասին խոսելիս՝ անդրադարձ չի կատարվել ներկայումս լայնորեն շրջանառվող Միջին միջանցքի գաղափարին, որի

տրամաբանության մեջ ամբողջովին տեղավորվում է Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացի հնարավոր ձևերի մասին տարանջման ոլորտում:

- Թեև հեղինակը շարադրանքում և հատկապես եզրակացությունում վեր է հանում մի շարք կարևոր խնդիրներ և դրանք ներկայացնում առաջարկների տեսքով, սակայն փաստացի դրանց գերակշիռ մեծամասնությունը այսօր պրակտիկորեն կիրառվում է ՀՀ արտաքին քաղաքականության մեջ: Շատ ցանկալի կլիներ, որ ևս մի քանի նոր, բովանդակային առաջարկներ ներկայացվեին հեղինակի կողմից:

Ամփոփելով վերոհիշյալ մոտեցումները և նկատառումները՝ ցանկանում եմ նշել, որ Տիգրան Ստեփանի Զաքարյանի «Շուվային ելք չունեցող երկրների տարանջիկ իրավունքների իրացումը միջազգային հարաբերություններում (ՀՀ օրինակով)» («The Realization of Transit Rights of Landlocked Countries in International Relations (On the Example of the RA)») թեմայով ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի

միջազգային հարաբերությունների և

դիվանագիտության ամբիոնի դասախոս,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակ Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ., դոցենտ Շիրակ Թորոսյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտական քարտուղար Ի.Գ. Բողոջևան

ԵՊՀ գիտական քարտուղար Ի.Գ. Բողոջևան

Մ.Վ. Հովհաննիսյան

Թ. 01. 26 թ.

